



«ՀԿՆ «ԵՐԵՎԱՆԻ «ՄԽԻԹԱՐ ՍԵՐԱՍՏԱՑԻ» ԿՐԹԱՀԱՄԱԼԻՐ» ՊՈԱԿ

(374 10) 74 72 46 (374 91) 43 10 99

0064, Երևան, Բաֆֆու 57  
Raffy 57, Yerevan  
Ереван, ул. Раффи 57

«MKHITAR SEBASTATSI» EDUCATIONAL COMPLEX MINISTRY OF EDUCATION AND SCIENCE OF THE REPUBLIC OF ARMENIA  
ОБРАЗОВАТЕЛЬНЫЙ КОМПЛЕКС «МХИТАР СЕБАСТАЦИ» Министерства образования и науки РА

<https://www.facebook.com/mxitaar.sebastaci?fref=ts> [info@mskh.am](mailto:info@mskh.am) [www.mskh.am](http://www.mskh.am)

19-01-010

15.01.2019թ.

## ՀՀ ԿԳ ՆԱԽԱՐԱՐԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ ՊԱՐՈՆ ԱՐԱՅԻԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Հարությունյան.

Սահմանված կարգով ներկայացնում ենք ՀՀ 2019թ. պետական բյուջեով նախատեսված «Նորարարական մանկավարժական ծրագրերի իրականացում հանրակրթությունում. **հեղինակային կրթական ծրագրերի վերամշակում և իրականացում՝ անհատի օժտվածության զարգացման բաց համակարգ՝ սպեղծագործ անհատի կրթական պատվերի իրականացում**» անունով (դասիչը՝ 1146, ծրագիրը՝ 11014) ծրագրի աշխատանքների բովանդակությունը (հավելված 1):

2019թ. ՀՀ բյուջեով հատկացված ծրագրային գումարն ամբողջությամբ (116 մլն 968,1 հազար դրամ) հաշվարկված է, ծախսվում է պետական այլընտրանքային՝ հեղինակային, կրթական ծրագրեր մշակող, կազմակերպող ու տարածող կրթահամալիրի կանոնադրությամբ որոշված բնականոն գործունեության ապահովման համար: Այսպես կրթահամալիրի հիմնադիր ՀՀ կառավարությունը «Կրթության մասին» ՀՀ օրենքի պահանջով (հոդված 46), գործող կարգով, ապահովում է կրթահամալիրի գործունեության առարկայով որոշված՝ **փորձարարական-հետազոտական, նախադպրոցական, հանրակրթական հեղինակային**, նախնական մասնագիտական (արհեստագործական), միջին մասնագիտական փորձնական, **նախասիրական, լրացուցիչ (այդ թվում՝ արտադպրոցական) կրթական ծրագրերի կազմակերպումը** (կրթահամալիրի կանոնադրություն, կետ 1, 12, 16):

2019թ. ծրագրում ընդգրկված է նաև նորարարական նոր ծրագրերի մշակում: Դրանք ուղղված են հեղինակային կրթական ծրագրերի տարածմանը, կներկայացվեն 2019թ. պետական բյուջեով, ՀՀ 2020-2022 թթ պետական միջնաժամկետ ծախսային ծրագրերով՝ լրացուցիչ ֆինանսավորում ստանալու համար:

Ներկայացնում ենք նաև կրթահամալիրի՝ հանրային, բաց, ամբողջական ներառական համալիր-դպրոցի տնտեսության ֆինանսական կազմակերպումը

(հավելված 2)՝ որպես հեղինակային կրթական ծրագրով ձեռքբերում, անհրաժեշտ կրթահամալիրի պահպանման, զարգացման և որպես մոդել տարածման համար (ամբողջությամբ կամ առանձին բաղկացուցիչներով):



**ՀԱՐԳԱՆՔՈՎ՝**

**ԿՐԹԱԿԱՄԱԼԻՐԻ ՏՆՕՐԵՆ՝**

Կապարող՝ Ա. Մարկոսյան

Հեռախոս՝ 74 72 46

**Ա. ԲԼԵՅԱՆ**

